Արձանագրություն 5

«ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

18.04.19թ.
ժ.10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Կարախանյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Ա. Խաչատրյան /գնահատող/
Ա. Ադամյան /գնահատող/
Հ. Գրիգորյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան
Բացակայում էր՝ Մ. Պողոսյան /բացող/

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման մասին
(Մ. Կարախանյան)

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ 1-ին չափաբաժնի մասով՝ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, սակայն 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով՝ առկա է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի հայտը 1-ին չափաբաժնի համար գնահատել բավարար, իսկ 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար գնահատել անբավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնահատման արդյունքների մասին
(Մ. Կարախանյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.2 կետով ընդունված որոշումը Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ին 1-ին չափաբաժնի համար հայտարարել 1-ին տեղ զբաղեցնող /ընտրված մասնակից/, իսկ 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար՝ մերժել վերջինիս հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.2 Հաստատել 1-ին չափաբաժնի համար պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.3 Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ին 1-ին չափաբաժնի համար անգործության ժամկետի ավարտից հետո, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.4 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 45-րդ կետը՝ Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի տվյալները, ներառյալ համապատասխան հիմքերը, ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, հաշվի առնելով, որ առկա են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի և 6-րդ ենթակետի ա/ մասով նախատեսված հիմքերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Գնման գործընթացը շարունակելու մասին

(Մ. Կարախանյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 49-րդ կետը և նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը հարցում ներկայացնել երրորդ տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Այ Թի Գրուպ>> ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել <<Այ Թի Գրուպ>> ՍՊԸ-ի համար ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան եզրակացությունը ստանալուց հետո՝ հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, ժամը 10:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Մ. Կարախանյան /նախագահ/

---------- Ա. Խաչատրյան

---------- Ա. Ադամյան

---------- Հ. Գրիգորյան

---------- Ա. Մարգարյան /քարտուղար/